ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/06 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նիստի

գ. Սարուխան **<<30>> օգոստոսի 2019թ.**
ժ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ա. Ասլանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ի. Բաղալյան, Ս. Հովհաննիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

ՀՀ ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/06 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի օրակարգ
Ա. Ասլանյան

1. Մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում:
2. Բանակցությունների արդյունքում և ներկայացված գնային առաջարկի հիման վրա գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշման ընդունում:
3. Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հարկային պարտավորությունների վերաբերյալ:
4. Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում:

1. Գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում <<ԹԻՎ 28 ՇՄՇ>> ԲԲԸ-ի, <<Արտաշես և Տաթևիկ>> ՍՊԸ-ի և <<ՖԱՎՈՐԻՏ-Մ>> ՍՊԸ-ի հետ

Քանի որ գնումը իրականացվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել էր.

Հիմք ընդունել ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ մասի բ/ ենթակետի դրույթները՝ 2019 թվականին օգոստոսի 30-ին, ժամը 10-00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխանի համայնքապետարանի վարչական շենքում՝ գների նվազեցման շուրջ կազմակերպել բանակցություններ:

Սակայն սահմանված ժամին ոչ մի մասնակից չներկայացավ նիստին և արդյունքում մասնակիցների գնային առաջարկները մնաց անփոփոխ և ունեցավ հետևյալ տեսքը.

հ/հ	Մասնակցի անվանումը	Աշխատանքի նախահաշվային գինը	Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ-ի	Առաջարկված գնի՝ ԱԱՀ-ն	Առաջարկված գինը՝ ԱԱՀ-ով
1	<<Արտաշես և Տաթևիկ>> ՍՊԸ	21352300	13345187.5	2669037.5	16014225
2	<<ԹԻՎ 28 ՇՄՇ>> ԲԲԸ		14300000	2860000	17160000
3	<<ՖԱՎՈՐԻՏ-Մ>> ՍՊԸ		21250000	-	21250000

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Ներկայացրած գնային առաջարկի և բանակցության արդյունքում գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշման ընդունում

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Ներկայացրած գնային առաջարկի հիման վրա՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ <<Արտաշես և Տաթևիկ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հարկային պարտավորությունների վերաբերյալ

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 43-րդ կետի 4-րդ մասի՝ <<Արտաշես և Տաթևիկ>> ՍՊԸ–ին առաջարկելով՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Սարուխան, Հ. Աբրահամյան 120 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ _____ Ա. Ասլանյան

Անդամներ՝ _____ Ի. Բաղալյան

_____ Ս. Հովհաննիսյան

Քարտուղար՝ _____ Ժ. Խաչատրյան